




Կուսակցական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




№ 11



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS



PHYSICS

JOHN F. WELLS



1897




PHYSICS

JOHN F. WELLS

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԳԻՍ ՀԱՆՐԱԿԻԴԱԳ HANRAKIDAG
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMENIEN ENCYCLOPEDIE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 11 || 20 ՄԱՐՏ 1904



ՊԶՏԻԿ ՀՈՂԱԳՈՐԾԻՆ ԵՐԳԸ

« Ես կը սիրեմ երթալ հորքս միտ մօտէն,
Արօսալայրն երբ կը հերկէ ուշադիր,
Կ'ըղծամ տեսնել խոփն արօրին սրաւեհն,
Երբ կը քանդէ աւանդական ամէն իր: »

« Կը դիմադրէ, լայն ափսոսներ կը պեղէ
Իր արօրին հասու շեղքը շողողուն,
Եւ շրջուած կազմաճեները կոյս հողէ,
Միտ հսմաչափ նամէս անցներ կը բողուն: »

« Անուշաբոյր կը վիլակին կոհակներ,
Նորաբացուած բաժակներու քաւմ գոգէն,
Եւ ցօղաքուրմ ծաղիկներէն, յամրեբեր
Կ'անյայտանայ լուրք մըւուրը հոտեղէն: »

« Եւ պարտասուն բազուկները մըւակին,
Կը ցանցընեն հասիկները՝ բուռերով,
Արագաթոյն կը սրլանայ եկամին,
Ցանուած ուղին քափառելու անխրոով: »

« Ու կ'ընթանան դանդաղ խալով զոյգ մ'եզեր,
Իբր անըկուն ուժին յենած քաշերու,
Եւ վրէտակիր, խուլ ձանձրոյթ մը կը պահեն
Բիբերնուն զոգն, առանց տեսնել յայտնելու: »

« Իրենց կայուն նայուածքին մէջ կը փայլի
Բերկրութեան շող՝ կը նուագեմ երբ սրբինգ,
Եւ կողերուն, քանձոր բումբին խրանի
Հարուած մը երբ՝ փայլերն յամբ, խոսորին: »

« Արօրադրուած դաշտերն, երեկ՝ անապակ,
Անկումներուն տակ բարեբար սուր խոփին,
Զըմբուխս, գոհար, ընդելուզուած անապակ
Այգուն ցողով, փութկոտ գարնան՝ կ'ընծիւղին: »

1903

ԱՇՈՏ Բ. ՔԷՉԵԱՆ

ՄԵՐ ՀՓԱՅԱԾ ՍԵՐՈՒՆԴԸ

Անցած օր բարեկամի մը տունը գտնուեցայ, ուր պզտիկ պատահար մը առիթը տուաւ ինձ քանի մը տողեր գրել « Մեր շրջագած սերունդ »-ին վրայ. մանաւանդ որ արդէն շատ անգամներ այդ նիւթին վրայ մտածեր էի:

Մեր բարեկամին տունը վարձուր մը կար, որուն դեռ հինգ տարեկան էր տղան. բոլորովին անգիտակ՝ թէ այդ պզտիկը մօրը կաթին հետ ծծեր էր իր « ես »ը, այնքան փխացնող հիւթը՝ գուրգուրանքը « Պօղոս » կանչեցի. պատասխանը լուծեան հետ լալու աստիճան ժանիք մը եղաւ. պատճառն հասկցայ երբ քովս գտնուողները ինձ ըսին « Պէտք էր Պօղոս աղա » կանչէիր:

Այս պզտիկը, իր անունը ճանչցած օրէն « Պօղոս աղա » յորջորջուեր էր, եւ առանց աղայի սոսկ Պօղոս բառն հայհոյանքէ մը աւելի ծանր կը հնչէր: Ինչ մը ետքը Պօղոս աղան իր մայրիկին կը գանգատէր, որ գուրգուրանքով կը մեղմացնէր վշտացած սիրտը, ու անշուշտ չէր ալ տարակուսուեր ըսելու. « Պօղոս աղա ըսես նէ բերանդ կ'առնուէր », առանց գիտնալու թէ՛ պզտիկին եսը աւելի կ'ուռենար:

Երկար մտածել տուաւ այս պզտիկ պատահարը, երկար մտածեցի մեր միջավայրի հարուստ դասակարգին նոր սերունդին վրայ, նոյքան երկար ալ աղքատ դասակարգին վրայ:

Եղով մեղրով մեծցած տունի, ծնողքի գուրգուրանքներէն արփշիւ այդ նոր սերունդը, որ ամէն օր ամէն վայրկեան մեր աչքին

առջեւն է. տունէն մինչեւ դպրոց, դպրոցէն ալ մինչեւ մեծ աշխարհ, շատ մտածել տուաւ:

Մեր ծնողքներու մեծ սխալներէն մէկն ալ ու գլխաւորն է չըփացնել իրենց զաւակները, չփացնել առանց գիտնալու թէ անոնք ապագային ամէն բանէ առաջ ու աւելի իրենց հեղինակներուն մեծ ցաւերը պիտի ըլլան:

Հարուստի զաւակն — որովհետեւ շփացածներն ընդհանրապէս այդ դասակարգին կը վերաբերին — տունին մէջ կ'ուտէ ամէն տեսակ խորտիկներ, կը հագնի գեղեցիկ զգեստներ, հայրիկին ու մայրիկին գուրգուրանքին հետ կը վայելէ ամէն բարիք, ամէն բանի մէջ իր խօսքը կ'ընէ, իր « այոն » ու « ոչ » իբր վճիռ կ'ընդունուին, ու այսպէս շոյուելով, փայփայուելով ջուր ծծող սպունգի պէս կ'ուռի անոր « եսը », որ այլեւս յղփառած տունի շոյանքներէն կ'ուզէ իր ասպարէզն ընդարձակել, տիրել փողոցի ընկերներուն, անոնց մէջ ալ իր խօսքը առաջ տանիլ ու յարգուիլ անոնցմէ:

Փողոցէն վերջը դպրոցի սեմէն ներս ալ նոյն բաներն են որ տեղի կ'ունենան: Յաճախ պատահեր եմ ծնողքներու, որոնք իրենց փայփայանքով մեծցուցած մանուկները դպրոց կը բերեն, զաղտնի շաքարի ստակ կուտան վարժապետին, որպէս զի այս վերջինն ալ տունի գուրգուրանքը շարունակէ. ցաւալին հոն է որ վարժապետներն ալ ծնողքէն կը համոզուին կարճատուրիւնով:

Կը շոյուի, կը շփուի խեղճ մանուկը (մեղքը առաջ ծնողքին յետոյ վարժապետներուն ճիտը), դպրոցին ալ կանոնները անոր համար բացառութեան էջեր կը բանան, յանցանքի ատեն պատիժի տեղ՝ չաքարով կը վարձատրուի:

« Տղան դպրոցին պիտի սիրահարի »: Խեղճուկ վարժապետներ, նկատեցէ՛ք որ չաքարով գոյացած սէրը կը հալի չաքարին պէս շատ շուտ. ու ամէնէն աւելի ցաւալին հոն է որ, երբ բարոյապէս կը մեռնեն խեղճ մանուկը մէկ կողմէն, միւս կողմէն ալ կը մոռնան թէ իրենց աշխուրթիւններով, քանի մը տղի պատճառով, չատերու ալ կուրծքին տակ չար նախանձի սերմեր կը ցանեն:

Դպրոցէն վերջ, աշխարհի մեծ չըջանը կը բացուի այդ փայփայանքով մեռածներուն առջեւ: Դուրսի կեանքին սեմին վրայ ոտք դրած ատեն, արդէն « ես »-ին ոստը անթեքելի դարձեր է. աս'ն հոս ալ մի եւ նոյն շոյանքն ու փայփայանքը կը փնտռէ առաջին ակնարկով, հո'ս ալ մայրիկին ու հայրիկին համարյոյրները, վարժապետին աչք գոցելները կը փնտռէ, ամէն բան տուն ու դպրոց կ'ուզէ որ դառնան իրեն համար, առանց գիտնալու թէ՛ աշխարհի կանոնները չեն նմանիր գուրգուրացող մայրիկին համ-


բոլորներուն ու վարժապետին աչառութիւններուն, ու առաջին աննպաստ պարագան կը յուսահատեցնէ խեղճն, որ բոլորտիքը զինք շփացնողները կը փնտռէ, բայց հետու են անոնք ու աւաճի, մինակ իրենց աւերները կը մնան :

Երբ աչքիս առջեւ կը բերեմ այս պատկերն, կը զղջամ երբեմն տրտնչած ըլլալուս համար Աստուծոյ դէմ, որ մեզ մեր առաջին օրերուն ախոյեան արձանագրեց դիմագրաւելու համար բախտին ամէն հարուածներուն :

Մի՛ տրտնջաք, աղքատ զաւակներ, երբ ձեր մանուկ օրերուն աղւոր պատմութեաններ չեն ծածկեր ձեր մերկութիւնը, երբ անուշ համադամներ չեն կշտացներ ձեր փորն, մի՛ նախանձիք պիտի ըսէի, բայց անկարելի է երբ աննկարագիր վարժապետներ « Զոջի զաւակ է » ըսելով աչք կը գոցեն անոնց յանցանքներուն, այլ արգահատեցէք անոնց, որովհետեւ անոնք մեռածներ են :

Մի՛ գանգատիք, երբ « Կարապետ աղա » չեն յորջորջեր ձեզ ու սոսկ Կարապետով ալ չգոհանալով « Կարուկ » կ'անուանեն, երբ բախտն ձեզ այնպէս մը ըրեր է որ, ձեր հասցէին « ծօ՛ լակոտ » բառեր նետուին : Աստուած գիտէ իր գործ, երբ մէկ կողմէն կը լքէ, միւս կողմէն այդ զրկանքները պատճառներ կը դարձնէ, որպէս զի Կամֆ, Նկարագիր եւ Տոկուցուքիւն ունենաք :

Մանուկ



Բարոյական Խրատներ

ՀԱՆՐԱՊԻՏԱԿԻ ՓՈԲՐԻԿ ԸՆԹԵՐՈՂՆԵՐՈՒՆ

Տ. — Վստահելի եղի՛ք

Վստահելի եղի՛ք ձեզի յամձնուած փոքրիկ պարտականութիւններուն մէջ : Շատ աղաքներ կը խորհին թէ քանի որ իրենց յանձնուած պարտականութիւնները փոքր գործեր են, եւ հետեւաբար զանոնք կատարելն աննշան բաներ նկատուելու են : Բոլորովին

սխալ գաղափար մը: Տղա՛ք, դուք այսպէս մի՛ խորհիք, իբր փոքրիկ պարտականութիւններ, ձեզի յանձնուած գործերը մեծ բաներ թող երեւան ձեր աչքին: Թո՛ղ աշխարհ տեսնէ — թո՛ղ Աստուած տեսնէ — թէ դուք ունիք այն բարձր նկարագիրն՝ որ ձեզ ճշգրտպահ, խնամող եւ հոգածու կ'ընէ: Փոքր պարտականութիւններու մէջ վստահելի եզոզ տղուն ես և բոլոր մարդիկ կը հաւատանք, կը սիրենք զայն եւ սիրայօժար կը յանձնենք անոր գործ մը՝ երբ խնդրէ սեղմէ:

Վստահելի եղիք ձեր խոստումներուն մէջ: Վստահելի տղան — որ կը պահէ իր խօսքն — ունի շատ մը բարեկամներ. երբեք մի՛ խօստանաք առանց կանխաւ համոզուելու թէ կրնաք ձեր խոստումը կատարել: Մի՛ ըսէք « այս ինչ բանը կ'ընեմ », եթէ կատարելապէս վստահ չէք թէ կարող էք զայն ընելու: Տղայ մը որ իր խոստումը կը կատարէ, կատարեալ վստահութիւն կը ներշնչէ իր դասատուներուն, իր ծնողաց եւ Աստուծոյ:

Տղա՛քներ, վստահելի եղիք ձեր փոքր պարտականութիւններուն մէջ եւ հետզհետէ մարդիկ՝ գնահատելով ձեր արժանիքն, մեծ պարտականութիւններ պիտի յանձնեն ձեզի, որոց մի առ մի տէրերը պիտի ըլլաք դուք: Վստահելի եղի՛ք ձեր խոստումներուն մէջ եւ անա այլոց համակրութիւնը պիտի շահիք եւ հաճելի պիտի ըլլաք ամէնուն:

×


Լա՛ւ է երբեք չխոստանալ՝ քան խոստանալէ վերջ զրոյսել զայն: — Քու սրտիդ խորը, կեանքը երջանկացնող զօրութիւն մը կայ, ճիշդ հոն նայէ:

— Մարդկութիւնը միշտ պատրաստ է ձեռք կարկառելու բայց յաճախ ձեռքը պարապ է:

— Երեք բաներ մեծ են, խիղճ, կամք և, ասոնց ստեղծած պարտականութիւնը կատարելու համար բարոյական ոյժ:

— Այն տղան՝ որուն խօսքը իր մուրհակին պէս վստահելի է, յաջողած է ունենալ բան մը որ աւելի լաւ է՝ քան մեծաքանակ դրամագլուխ մը:

ՄՐՏԱՀԱՆԳԻՍ



ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՂԶԿԱՆՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



ՃԱՆՃԸ ՔԱՅԱԽՈՎ ՉԵՆ ԲՈՆԵՐ

(Շարունակութիւն 10րդ թիւէն)

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ (առանձին)

Ասիկա սաստիկ խստութեան մը արդիւնքն է, որովհետեւ այս երկու պզտիկ աղջիկները շատ խելօք էին առաջ. վեց չաբաթ է ի վեր երբ Տիկ. Պիստոս զանոնք իր ուղղութեան տակ առած է, չար ու անհնազանդ կ'ընէ կոր, շատ չեխելով, պարսաւելով, անօգուտ տեղը սաստելով, ու անարդար կերպով զանոնք պատժելով: Մնաց որ ասոնց ամէնն ալ պիտի վերջանան: Վաղը մայրերնին պիտի գան, չեմ կարծեր որ տիկին Նուարդ գոհ ըլլայ փոփոխութենէն որուն ենթարկուած են իր աղջիկները:

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ԵՒ ՏԻԿ. ՊԻՍՏՈՍ

Տիկ. Պիս. — Խիս գրգռուած ներս կը մտնէ եւ արողի մը վրայ կը նստի. — Զարհուրած, անհանգիստ եմ, միջոց չկայ Շուշանը գտնելու, եւ որ աւելին է, Ալիս աներեւութացած է: Ձեր պզտիկները զանոնք կը փնտոեն կոր ամբողջ պարտէզին մէջ: Բոլոր ծառաներն ալ զանոնք փնտոելու զրկեցի: Ի՞նչ պիտի ըլլամ, Աստուած իմ, եթէ զանոնք չգտնեն: Հերիք է որ Շուշան լճակին, հորերուն, աղբիւրին քովերը գացած չըլլայ: Ես ի՞նչ գիտնամ. ամէն բան կարելի է ենթադրել:

Օր. Հայ. — Կը ցաւիմ ձեր վրայ, տիկին, որովհետեւ այս տեսակ անհանգստութիւնը ահաւոր է, երբ մարդ պատասխանատուութիւնն ունի տղոց եւ մանաւանդ...:

Տիկ. Պիս. — Մանաւանդ ի՞նչ... րո՛ւք, մանաւանդ ի՞նչ:

Օր. Հայ. — Մանաւանդ երբ մարդ կրնայ աւելի՛ քաղցրութեամբ, աւելի զիջումով յանդիմանութիւններ չընել:

Տիկ. Պիւ. — Ինչի՞ յանդիմանութիւնները:

Օր. Հայկ. — Արտակարգ յանդիմանութիւնները գոնէ: Հաւատացէ՛ք ինծի, տիկին, կրթութեան այս դրութիւնը սխալ է. ներեցէ՛ք, եթէ աւելցնեմ թէ գէ՛շ ալ է:

Տիկ. Պիւ. — Բայց ձեզ կ'ապահովցնեմ որ տղոց հետ խիստ վարուելու է, առանց ասոր անհնազանդ, ստախոս, ծոյլ, լիբբ կըլլան: Պ. Նորթսընի, Պ. Քէսթուինտի եւ Տիկ. Սաութուէյի, երեք մեծ ընտանիքներ որոնց հետ շատ ապրած եմ իմ էրկանս ողջութեանը, երբ Ամերիկայի մէջ վաճառական էր, — տղաքը մեքենաներու պէս հնազանդիլ սորված էին. վասն զի վարժուհիները արտօնութիւն ունէին գործադրելու պէտք եղած պատիժներն ու զրկումները. ասանկով կրթեցին տղաքը, այս գօտին, զոր ձերին պզտիկները վայրագ կը գտնեն, միշտ տեսած եմ աշխատցնելու և անոնց մարմնական թերութիւնները արգիլելու համար գործածելին, ու Նիւ Եօքէն է որ զայն բերած եմ: Խստութիւնն ու պատիժն ազդելու մեծ միջոցներ են. անոյշ ազդարարութիւններն, մեզմ յանդիմանութիւններն անբաւական են:

Օր. Հայկ. — Բայց տիկին, իմ պզտիկներս, զոր երբեք չեմ պատժեր, երբեք չեմ յանդիմաներ գրեթէ, զորս կը սիրեմ եւ որոնց կը ցուցնեմ սէրս, ինչո՞ւ հնազանդ, բարեկիրթ, գթալիւր ու բարի են, մինչդեռ Շուշանն ու Ալիսը, որոնք միշտ կը սաստուին, օրէ օր աւելի անհնազանդ, աւելի՛ ընդզոզ, աւելի՛ անտանելի կը դառնան:

Տիկ. Պիւ. — Անոր համար որ ես միայն վեց շաբաթէ ի վեր է որ անոնց քով եմ. եւ որ օգնութիւն գտած ըլլալ կը զգան իրենց սպասուհիներէն, իրենց մօրաքրոջը (աղջիկներէն, ու ձենէ, օրիորդ:

Օր. Հայկ. — Բայց տիկին, երկու տարիէ ի վեր ես զանոնք կը ճանչնամ, տարուան մէջ վեց ամիս հոս գիւղապետացութեան կուգան իրենց մօրաքրոջը՝ տիկ. Սաթենիկի տունը: Ձեզ կ'ապահովցնեմ որ անոնք շա՛տ բարի, շա՛տ խելօք էին. այն օրէն ի վեր երբ դուք անոնց ծնողքին ազգական ըլլալնուդ համար տիկ. Նըւարդի բացակայութեանը ստանձնեցիք զանոնք կրթելն, ա՛յն օրէն ի վեր անոնք փոխուեցան: Դուք զիս կը յանդիմանէք զանոնք պաշտպանելու համար: Տիկին, իրենց մայրը, վախնալով թէ դուք հետերնին քիչ մը խիստ կը վարուիք, աղաչեց որ զանոնք չլքեմ ու պաշտպանեմ պէտք եղած պարագային: Ահա՛ ինչո՞ւ համար անոնց գործերուն կը խառնուիմ ու կ'օգնեմ երբեմն այս հէք տղոց որոնց վրայ իրա՛ւ որ կը խղճամ:

Տիկ. Պիւ. — Սիրելի օրիորդս, ձեր ամբողջ ըսածներուն ամ-

փոփումը գիտէ՞ք: Աւասիկ, մեր տղաքն անկիրթ, չփացած, ան-
քաղաքավար, շատախօս ու չարահօծի են: Ես կ'ուզէի տիկ. Նուար-
դի տղոց տարբեր ու գեղեցիկ կրթութիւն մը տալ իրենց ծնող-
քին բացակայութեանը: (Ոսֆի կ'ելլէ): Աս անպիտան տղաքն են
որոնք չեն գտնուիր կոր. չեմ գիտեր ի՞նչ ընեմ: Հերիք է՝ որ ա-
ւազանի մը մէջ ինքզինքնին չխեղդեն: Սոսկալի՞ բան է: (Դեպ ի
դուռը կ'ուղղուի):

Շուշ. — Սեղանինց սակեմ. — Հանդարտեցէ՛ք, անոնք կուգան:
(Տիկ. Պիս. եւ Օր. Հայկանոյց զարմացած կը մնան):

Տիկ. Պիստոս ետ կը դառնայ. դէպի սեղանը կը յառաջանայ
ու վեր կը վերցնէ ծածկոցը:— Բան մը չկայ. Շուշան հոն չէ: Ա-
հաւասիկ երկրորդ անգամն է որ կը լսեմ անոր ձայնը, բայց ոչ
Ալիս կայ եւ ոչ Շուշան: (Օրիորդ Հայկանոյց ալ վեր կը վերցնէ
ծածկոյթը, կը նայի. մէկն ալ չի տեսներ ու խիստ զարմացած կը
մնայ):

Առջինները, ՄԱԹԻՆՏ եւ ՍԻՐՎԱՐԴ

Սիր. — Տիկի՛ն, Ալիսը պարտէզին մէջ գտանք, Շուշանը կը
փնտռէր, զոր ոչ ոք տեսած է, չեմ հասկնար թէ ո՞ր գացած է և
ի՞նչ եղած է:

Տիկ. Պիս. — Քիչ մը առաջ սեղանին տակէն կը խօսէր կոր,
նայեցանք, բայց մէկը չիկար:

Սիր. — (Զարմացած). — Ուրկէ՞ կ'անցնի. երկու անգամ է
որ կ'երեւնայ ու կ'աներեւութանայ:


Օր. Հայկ. — Երթամ Կիրակոս աղբարին ըսեմ, թերեւս ան
գիտէ թէ ի՞նչ եղած է:

Տիկ. Պիս. — Զեղի կը հետեւիմ, օրիորդ, ու պիտի ջանանք
նաեւ Ալիսն ալ բռնել: (Կը մեկնին):

Թարգմ. Վ. ԳԱՐԱԳԱՆԵԱՆ


Տիկ. ՍԵԿԵԻՐ ԿՈՄՍՈՒՂԻ

(Շարունակելի)



Acier

բութիւնն ու առաձգութիւնը. միւս մարմիններն են մանկանէզ, քրօմ, քայլախազ, լուսածին, ծծումբ: Երբ պողպատէ ցող մը տաքցնեն մինչեւ բաց կարմիր բարեխառնութիւնը, պահ մը կուգայ ուր մետաղին տարածականութիւնն ու փայլին յաւելումը կը դանդաղան, ասիկա նշան է զանգուածին մէջ տեղի ունեցած քիմիական փոփոխութեանց. պաղած ժամանակն ալ նման դանդաղացում մը յառաջ կուգայ քիչ մը աւելի վար բարեխառնութեան մը մէջ. ասկէ դիւրին է հետեւցնել թէ անմիջական պապաղումին հետեւանքը ինչ կրնայ ըլլալ. երբ մետաղը պաղած ժամանակը յանկարծակի կ'անցնի այդ կէտէն, կը պահէ քիմիական այն յատկութիւնները զորս ստացած էր բարձր բարեխառնութիւններու մէջ. այս սկզբունքին վրայ հիմնուած է միտմի գործողութիւնը: Եթէ պողպատին բիւրեղական վիճակը քննենք, պիտի տեսնենք որ միտած պողպատի մը կազմութիւնը բոլորովին տարբեր է կամաց կամաց պաղած պողպատինէն, հետեւանքնական յատկութիւններն ալ պիտի տարբերին:—Պողպատի




Պատ. 1


ծագումը շատ հին է. կ'երեւի թէ երկաթի դարուն վերջերը գտնուած է. հին Հռոմայեցիներու ժամանակ լաւագոյն պողպատը կուգար Չինաստանէն: Ռէօմիւր. Պէրթօլէ և Սօնթ կատարելագործած են զայն պատրաստելու արհեստը: Պողպատը յառաջ բերելու համար երկու միջոցներ կան. թափօններու բաղադրութեան մէջէն բնածուխը պակսեցնել և կամ երկաթի կազմութեան վրայ բնածուխ աւելցնել: — Թափօնները՝ բաղադրութիւններ են երկաթի եւ բնածուխի՝ որու մէկ մասը բաղադրուած է հանածոյին հետ, իսկ միւս մասը խառնուրդ վիճակի մէջ կը գտնուի. թափօններու մէջ բնածուխին համեմատութիւնն է $\frac{0}{100}$ 2էն 5, մինչդեռ պողպատին մէջ $\frac{0}{100}$ 1,75էն 0,35 կ'ըլլայ. դիւրին է հետեւցնել թէ թափօնին պարունակած բնածուխին մէկ մասը հանելով՝ պողպատի պիտի փոխուի ան: Մասնաւոր ձեւով շինուած (Պատ. 1) հնոցի մը 0 վառարանին մէջ հանքածուխ կը վառեն որու արտադրած ջերմութեան ազդեցութեան տակ թափօն կը հալի և կը կորսնցնէ բնածուխին մէկ մասը: Սիմոն-Մարթէնի դրութիւնը հիմնուած է այս սկզբունքին վրայ. մասնաւոր փուռերու մէջ թափօն և երկաթի կտորներու կամ հանածոններու խառնուրդ մը կը հալեցնեն, որով բնածուխը այս երկու նիւթերուն մէջ հաւասարապէս բաշխուելով պողպատին մէջ ունեցած համեմատութիւնը կ'ստանայ: Պողպատի պատրաստութեան երկրորդ միջոցն է երկաթն ու ածուխը բարձր բարե-

Acier

խառնութեան մը մէջ պահել որով երկաթը կը ծծէ բնածուխը մինչեւ պողպատ կազմելու համեմատութեամբ. երկաթի ու փայտի ածուխի շարքեր կը գետեղեն աղիւսէ շինուած սնտուկներու մէջ և 7-12 օր շարունակաբար յատուկ հնոցներու մէջ (Պատ. 2) մութ կարմիր բարեխառնութեան մէջ կը պահեն. այս կերպով պատ-
րաստուած պողպատը գիւրաբեկ կ'ըլլայ և թերթ յօրինուածք մը կ'ունենայ. սոյն պակասութիւնները ջնջելու համար մասնաւոր փուռերու մէջ կը հալեցնեն (Պատ. 3) զանոնք և կաղապարներու մէջ կը թափեն. 1856ին Հէնրի Պէտէմէր Անգլիոյ մէջ ծանոյց իր նոր գիւտը որով կարող կ'ըլլար պողպատը պատրաստել առանց ածուխ գործածելու: Հալած թափծով զանգուածի մը մէջ օդի



Պատ. 2




Պատ. 3

զօրաւոր հոսանք մը կ'անցնեն, թթուածինը կ'այրէ բնածուխը և երբ հանածոն բոլորովին կը կորսնցնէ իր պարունակած բնածուխը, վրան կ'աւելցնեն նորէն հալած թափծո, որու պարունակած բնածուխը երկու զանգուածներուն մէջ հաւասարապէս բաշխուելով պողպատին համեմատութիւնը կուտայ: Պէտէմէրի գործիքը կը բաղկանայ (Պատ. 4) արոյրէ խոշոր ընդունա-
րանէ մը որ երկու յատակ ունի՝ մէջինը պզտիկ ծակերով ծած-
կուած: Այս յատակին վրայ է որ կը լեցնեն հալած թափծոն, իսկ երկու յատակներուն մէջտեղ կը հաւաքուի պատկերին վրայ գոր-
ծիքին ձախ կողմէն տեսնուած խողովակէն եկող օդը, որ իր նու-
նեցած զօրաւոր ճնշումին շնորհիւ ծակտիկներէն կ'անցնի թափ-
ծոին զանգուածին մէջ և ամբողջովին կ'այրէ անոր բնածուխը:
— Պողպատի գործածութիւնը օրէ օր աւելնալ կը ձգտի. հրետա-
նիները, մարտանաւերը, առեւտրական շնգենաւերը, երկաթուղ-
ւոյ գիծերն, մեքենաները ամբողջ պողպատէ կը շինուին, առ-

Açores

անց հաշիւի առնելու մանր մունր առարկաները՝ զմեկները, ածելիները եւայլն:



Պատ. 4

Les Açores, Ասորեաց կղզիներ. — Ատլանտեան Ովկէանոսին հարաւային կողմը կղզիներու խումբ մըն է, 1300 քիլոմէթր հեռու Փորթուկալէ որու կը պատկանի: Այս արշիպելագոսը կազմուած է ինը կղզիներէ՝ Ս. Մարիամ և Ս. Միքայէլ՝ հարաւարեւելեան կողմը, Թէրսէիրա, Ս. Գէորգ և Կրասիոզա՝ հիւսիսային կողմը, Ֆայալ և Բիքո՝ կեդրոնը, Բորվո և Ֆլորէս՝ հիւսիսային արեւմտեան կողմը: Լեռնոտ ու հրաբխային են այս կղզիները ուր երկրաշարժը անպակաս է. կլիման առողջ ու բարեխառն է. հողը լաւ ոռոգուելով խիստ բերրի կը դառնայ և կ'արտադրէ տիսսօր, ադամաթուղ, լեմոն, նարինջ, ընտիր գինի: Բնակիչներուն թիւը 256,000ի կը հասնի: Մայրաքաղաքն է Անկրա՝ Թէրսէիրա կղզիին մէջ. երբ 1436ին Գապրալ գտաւ այս արշիպելագոսը, շատ մը ձիներ տեսաւ հոն, բնիկները այս թռչուններուն ասոր կ'ըսեն, այդ անունը տուաւ նաեւ Գապրալ՝ արշիպելագոսին:

Acoustique, Ձայնաբանութիւն. — Ձայնաբանութիւնը կ'ըզբաղի ձայներով, զանոնք յառաջ բերող պատճառներով և անոնց յառաջացման օրէնքներով: Բնագիտութեան մէկ մասը կը կազմէ թէեւ բայց կապակցութիւն ունի բնախօսութեան հետ՝ որ ական-

Acoustique

Ղին՝ ձայները զգացող գործարանին կազմութիւնը կը բացատրէ ։ հոգեբանութեան հետ՝ որ ձայնին առթած զգայնութիւններով և անոր գաղափարներու հետ ունեցած յարաբերութիւնով կ'զբաղի, վերջապէս երաժշտութեան հետ՝ որ հաճոյք մը պատճառելու կամ գաղափարներ ու զգացումներ ներշնչելու նպատակով ձայները յարդարելու արհեստն է ։ Եւ սակայն ձայնաբանութիւնը իր անշատ սահմանի շրջանակն ունի, որովհետեւ յսական զգայնութիւնները գոյութիւն ունին անկախաբար ամէն արտաքին պատճառէ ինչպէս կարգ մը հիւանդութիւններու միջոցին, քլորֆորմի ազդեցութեան տակ մարելու ժամանակ՝ ուր զանգուկի ձայներ կը լսուին. նոյնպէս ալ երբ ականջը կամ տեսողական շիղերը կը խզուին, բոլոր ձայն արտադրող արտաքին պարագաները աննշմարելի կ'անցնին ։ — Հոս յարմար կը դառնայ քանի մը դիտողութիւններ ընել մեր բռնելէք ուղղութեան մասին. սոյն գործը պարզ բառարան մը ըլլալէ աւելի համայնագիտարան մը լինելով կուռ ամփոփութիւն մը դրինք անոր նիւթերու դասակարգութեան մասին. բոլոր բառերու բացատրութիւնները՝ որոնք ընդհանուր գաղափարի մը մէկ մասը միայն կ'արտայայտեն. տուինք ընդհանուր գաղափարը արտայայտող բառին մէջ. օրինակի համար, այս գլուխին մէջ պիտի խօսինք բոլոր նիւթերուն վրայ որոնք ձայնին հետ վերաբերութիւն ունին. երբ ընթերցողը կ'ուզէ ծանօթութիւններ կարդալ ձայնի արագութեան, ձայնագրութեան, երաժշտական գործիներու եւայլնի վրայ, այս գլուխին պէտք է որ դիմէ. աւելորդ է ըսել թէ այն նիւթերու վրայ որոնք ինքնին կարեւորութիւն մը ունին պիտի խօսինք մասնաւոր գլուխներու մէջ, ինչպէս, ձայնական լարերու օրէնքներուն վրայ այս հատուածին մէջ պիտի խօսինք. սակայն դաշնակին համար դատ գլուխ մը պիտի յատկացնենք ընդարձակօրէն խօսելով գործիքին ծագումին, կազմութեան ելնի վրայ ։ Նոյնը պիտի ընենք նաեւ միւս բոլոր նիւթերուն համար ալ ։ — Առաջին անգամ Պիթագորոս ուսումնասիրեց թրթռացող լարերու երկայնութեան ու անոնց արտադրած ձայնի բարձրութեան միջեւ եղած համեմատութիւնները և թիւեր մտցուց բնագիտական այս երեւոյթի ուսումնասիրութեան մէջ. անկէ ետքը անցած երկու հազար տարիներու տեւողութեան մէջ ձայնաբանութիւնը ո եւ է յառաջդիմութիւն մը չըրաւ. կալիէոս և Պաքոն հիմերը դրին այս գիտութեան որ ժն է ժհ դարերու մէջ արագօրէն ընդարձակուեցաւ ։ Կասանտի բացատրեց թէ ինչպէս թրթռացումներու թիւին համեմատ ձայնը սուր կամ հաստ կ'ըլլայ, և Մէրսէն որոշեց ձայնաչարի զանազան խազերուն ունեցած թրթռացումներուն միջեւ գտնուած համեմատութիւնները ։ Օթթօ տը Կէրիք հաստատեց թէ դատարկութեան մէջ ձայնը չյառաջանար և Գիրչըր փրձագանքին բացատրութիւնը առաւ ։ Սօվէօր ձայնական լարերու կամ թերթերու վրայ հանգոյցներն ու փոքրը ցուցուց ։ Նեւտոն ձայնի յառաջացումը բացատրեց հիմնուելով միմիայն անոր անցած միջավայրերուն առանձգականութեան վրայ ։ Ժհ դարու վերջերը երեւան եկան թրթռումներու թիւը հաշուելու դրութիւնները յուշապատ-

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

Ա Ղ Ը

Աղը ամենաառատ կերպով պատրաստ կը գտնուի բնութեան ծոցը, ծովու ջուրերուն մէջ հարիւրին երեք կամ չորս համեմատութեամբ լուծուած է ուրիշ շատ մը աղերու հետ, երկրի խաւերուն մէջ ալ մեծ քանակութեամբ կը հանդիպինք անոր, ուր դարեւ առաջ գտնուած լիճի մը ջուրերուն շոգիացումէն մնացած է, և զոր աղուճակ կը կոչենք։ Այս իրողութեան ճշտութիւնը ստուգելու համար բաւական է քննել աղահանքի մը ստորին խաւերը. աղի խաւին տակը վերէն վար յաջորդաբար պիտի գտնենք գաճաքարի, կրաքարի խաւեր. ասոնք ալ ժամանակին աղերու հետ մէկտեղ ծովի ջուրերու մէջ լուծուած կը կենային և միջավայրի փոփոխութեան մը հետեւանօք վայրասուզած են ամէնէն առաջ, լուծականութիւննին կերակուրի աղին բաղդատմամբ շատ նուազ ըլլալուն պատճառաւ. այսպէս ամէնէն առաջ ամէնէն քիչ լուծելի եղող կրաքարը, յետոյ գաճաքարը, ետքէ աղը ծովուն յատակը իջած եւ խաւեր կազմած են որոնց նոյն կարգով կը հանդիպինք աղահանքերու մէջ։ Աղի այս հանքերն են որ ջուրի ընդերկրիայ հոսանքի մը ճամբուն վրայ գտնուելով կը լուծուի և տեղ տեղ երկրի ճեղքերէն դուրս ելլելով շահագործելի կը դառնան։

Ասոնցմէ զատ աղը շատ մը հանքային ջուրերու մէջ ալ կը գտնուի առաւել կամ նուազ համեմատութեամբ ինչպէս նաեւ կարգ մը բոյսերու, մանաւանդ ցորենազգիներու և խաչածեւերու մէջ, գիտենք արդէն թէ ջրկոտեմը ինքնին աղի է, կենդանական յօրինուածքին մէջ ալ զգալի համեմատութեամբ կը գտնուի։

Աղի ֆիզիքական նշանակելի յատկութիւններն են՝ թէ տաք և թէ պաղ ջուրի մէջ գրեթէ միեւնոյն համեմատութեամբ լուծուիր, այսինքն ջուրին ջերմութիւնը աւելցնելով կարելի չըլլար աւելի մեծ քանակութեամբ լուծել, ինչ որ պիտի պատահէր ուրիշ շատ մը աղերու։ Երբ կրակի վրայ քիչ մը աղ նետենք աւելի մանր կտորներու բաժնուելով կը ցատկըտէ կոտորուորի ձայներ արձակելով. ասոր պատճառն է բիւրեղներուն մէջտեղը գտնուած ջուրը որ տաքութեամբ չօգինալով բիւրեղները իրարմէ զատուելու կարող ոյժ մը յառաջ կը բերէ։

Թէ ինչ փոփոխութեանց կ'ենթարկուի և ինչ երեւոյթներ յառաջ կը բերէ աղը կենդանական գործարանաւորութեան մէջ մտնելով մարսողական խողովակը հասնելէ քանի մը վայրկեան վերջ՝ կարելի է հաստատել ներկայութիւնովը թուքին և մէզին մէջ, ինչ որ կը ցուցնէ թէ կարգ մը ուրիշ աղերու նման տրագորէն կը ծծուի, բայց հոս կարեւոր է աւելցնել թէ չատ մը ազդակներու նման չժողուրուիր մարմինին մէջ որքան ալ մեծ քանակութեամբ առնուի, այլ արիւնին մէջ հազարին չորս կամ հինգ համեմատութեամբ լուծուելէ ետքը աւելորդը կ'արտաքսուի մէզի, քրտինքի եւլն.ի միջոցաւ:

Արիւնին անցնելով անոր թանձրանալու ձգտումը կը յապաղեցնէ, ինչ որ արեան կանոնաւոր շրջանառութեան այնքան նըպաստաւոր է, նոյնպէս անուղղակի կերպով պատճառ կ'ըլլայ կարմիր գնդիկներու թիւին շատնալուն, արգելք մը դնելով անոոնց շուտով փճանալուն, թէեւ կարող չէ երկաթի աղերուն պէս հարստացնել մեր արեան այս կենսունակ տարրն որու շատութենէն կամ քիչութենէն կախում ունի մեր առողջութեան վիճակը:

Ընտանի կենդանիներու այնքան ախորժանքով աղ ուտելը և համեմատաբար աւելի առոյգ ու հուժկու ըլլալը, փայլուն ու կակուղ մազեր և աւելի համեղ ու հիւթեղ միս ունենալը ապացոյց մըն է որ աղը կարծուածէն աւելի կարեւոր նիւթ մըն է անդառութեան տեսակէտով:

Աղը կաթին առատ արտադրուելուն ալ պատճառ կ'ըլլայ. ասոր համար է որ ինչ ինչ երկիրներու մէջ կաթնտու կովերու անունը աղի ջուրով էլ լի է:

Յիշենք նաեւ աղին մէկ զարմանալի յատկութիւնն ալ. եթէ չափաւոր քանակութեամբ (5—10 կրամ) առնուի աղիքներուն մէջ ծծուելով պնդութիւն կը պատճառէ, մինչդեռ եթէ աւելի քանակութեամբ առնուի (30—40 կրամ) լուծողութիւն տեղի կ'ունենայ. այս երեւոյթը բնագիտօրէն արտամղումի և ներքնամղումի օրէնքով կը բացատրուի, որ ուրիշ բան չէ եթէ ոչ. խտութեամբ տարբեր երկու հեղուկներ երբ կենդանական թաղանթով մը իրարմէ զատուին, մէկէն միւսը երկու հոսանքներ տեղի կ'ունենան բայց նուազ խիտ հեղուկէն դէպի աւելի խիտը եղող հոսանքը շատ աւելի արագ ըլլալուն՝ հակառակ հոսանքը անզգալի կը մնայ. ահա այսպէս քիչ քանակութեամբ աղը թեթեւ լուծոյթի մը վիճակին մէջ աղիքներու մէջ հասնելով ամբողջովին կը ծծուի որով աղիքներու հեղուկն ալ պակսելով պնդութիւն յառաջ կուգայ, մինչ մեծ քանակութեամբ եղած ատեն աւելի թանձր լու-

ծոյթ մը պատրաստուելուն արեան ջուրը դէպի աղիքները կը պարպուի և լուծողութիւն յառաջ կը բերէ. ասոր համար է որ աղային լուծողական առնողներ սաստիկ ծարաւ կ'զգան երբ դեղին աղդեցութիւնը կ'սկսի զգալի ըլլալ: Իսկ լուծողութեան յաջորդող պնդութիւնն ալ կրնանք վերագրել աղի ծծուած այն քանակութեան որ հակառակ հոսանքով մը արեան մէջ անցաւ:

Այսքան ծանօթութենէ վերջ, անոնք որ առանց բժշկի կամ փորձ դեղագործի մը խորհուրդին որոշեալ քանակութենէն նուազ չափով մը ունենան աղային մաքրողական, կ'առնեն և հակառակ արդիւնք մը կը տեսնեն, անշուշտ պիտի կարենան լուծել այս հանելուկը: Աղը իր այս զանազան յատկութեանց շնորհիւ կրնայ գործածուիլ չաքարախտի, հիւծախտի, ընդհատական ջերմի, յօդացաւի, ստամոքսի և աղեաց խանգարման եւ քօլէրայի դէմ որոնց մանրամասնութիւնը բժշկին վերապահեալ է:

Ետիգուլէ

ԱԻԵՏԻՍ ԳՈՒՑՈՒՄԾԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ՏՈՒՆ ՄԸ 50 ՄԵԹՐ ԲԱՐՁՐԸ ԿԸ ՏԱՆԻՆ

Ամբողջ տուն մը, առանց քակելու, միտկտուր բարձրացնել իր գտնուած տեղէն 50 մեթր բարձր տեղ մը և հոն հաստատել՝ քիչ մը արտասովոր կ'երեւայ և ամէն տարօրինակ բաներու պէս Ամերիկայէն է որ լուր կ'առնուի: Քանի մը տարի առաջ կը զարմանային թէ տունները ինչպէս տեղէ տեղ կը փոխադրուին առանց քակուելու. այսօր այդ գործողութիւնը այնքան սովորական բան մը դարձած է որ Ամերիկայի օրէնսգէտները չուարած են թէ ինչպէս զանազանն անշարժ կալուածները շարժուն ինչքերէն, քանի որ հոն պարզ սնտուկի մը պէս տունները ուղած տեղերին կը տանին առանց մեծ դժուարութեան:

Բայց գործողութիւն մը որու նմանը տակաւին տեսնուած չէր, 50 մեթր բարձրութեամբ բլուրի մը ցից կողին ստորոտը շինուած մէկ տունը անոր գագաթն հանելն էր: Ահա՛ ինչ կ'ըսէ այս մասին Սայանքիֆիգ Ամերիկեցի:

Մօնօնկաէլա գետին եզերքը կը բարձրանար ընդարձակ շէնք մը, որ քանի մը սերունդներէ ի վեր իբր հօրենական տուն կը ծառայէր Պրաուններու ընտանիքին, այս գետին երկայնքէն կ'անցնի Պայքիմուր Կէս Օնիօ Ռեյլուէյ գիծը՝ որու վարչութիւնը չորս հինգ տարիներէ ի վեր ձեռնարկած է բարեփոխել երկաթեայ ճամբաները: Վերջերս կարգը եկաւ գետին երկայնքէն անցնող գիծին

կոր մասերը վերցնելով կարելի եղածին չափ զայն շտկելու. արդ, անանկ եղաւ որ երկաթեայ գիծը պիտի անցնէր ճիշտ այդ տունին տեղին վրայէն և տանտէրը ցաւով կը տեսնէր թէ պապենական տունը փլցնելու պիտի ստիպուի: Երբ միտք ըրաւ որ բնակութեան կոնակը բարձրացող բլուրին գազաթը ընդարձակ դաշտեր կան որոնք իրեն սեպհականութիւնն են. «սնկարելի» բառը Ամերիկացիներուն համար չէ, սեպհականատէրը մտածեց իր տունը 50 մետր վեր այդ բլուրին վրայ փոխադրել տալ, մանաւանդ որ հոն սքանչելի տեսարան մը պիտի ունենար իր պատուհաններուն առջեւ:

Պրատունի տունը 26 մետր երկայնութիւն և 12 մետր լայնութիւն ունէր, և 800 թօնօ կը կշռէր: Ամէնէն առաջ տունին երկայնութիւնը գետեղեցին ութը հատ ամուր գերաններ և անոնց ու տունին մէջտեղը 200է աւելի 18 սանդիմետր բարձրութեամբ պողպատէ մանր գերաններ: Միւս կողմէ տունին կոնակը ժայռին ցից կողին վրայ հինգ հատ՝ տասնական մետր բարձրութեամբ խոշոր սանդուղներ շինեցին: Սկսան կամաց կամաց տունը վեր բարձրացնել, և քանի վեր ելլէր տակէն ատաղձներով շարժուն պատեր կը շինէին, այսպէսով հասան 10 մետր բարձր ժայռին մէջ փորուած առաջին աստիճանին վրայ. տունը այդ սարահարթին վրայ քաշեցին և նոյն աշխատութիւնները վերսկսան մինչեւ որ հինգ աստիճաններէն ալ անցնելով հասան բլուրին գազաթը:

Այս փոխադրութեան առթած ծախքովը կարելի էր մէկ երկու հատ տուններ շինել այդ տունէն աւելի մեծ ու չքեղ. բայց Պրատունի փափաքը ոչ ոքի տակն տունը պահելն էր և յաջողեցաւ ալ:

2. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՐԾԱԹԱՎԱՐՍ ՆԱՊԱՍՏԱԿԸ

(ԱԻԱՆԴԱՎԷՊ)

Կ'ըսուի թէ ատենով, հին բարի տարիներուն մէջ — երբ կենդանիները կը խօսէին և հաւերն ալ ակոյ ունէին — գեղեցիկ դղեակ մը կար հոն՝ ուր կռէ լեռան մօտ Լուսկայի թեմին մէջ Գէրօտէրնի ազարակը կը տեսնուի հիմակ: Այս դղեակը հարուստ ու կարող պարոնի մըն էր որ չորս զաւակ ունէր. մանչ մը և հիւանալիօրէն գեղանի երեք աղջիկ: Գէրօտէրնէն քիչ հեռու, ընդարձակ անտառի մը մէջտեղ մարդակեր հսկաներ կ'ապրէին. օր

չէր ըլլար որ ծեր պարոնին մեծ մեծ ֆիւսաներ չհասցնէին, զոր օրինակ մերթ եղ մը կը գողնային, մերթ կով մը եւ մերթ աւերակոտասնեակներով ոչխարներ: Խեղճ մարդը այդ դրացիներէն ինչպէս պաշտպանուիլը չէր գիտեր: Իր որդին Մալօ գրեթէ ամէն օր անտառը որսի կ'երթար, բայց ասոր հետ մէկտեղ միշտ ալ կր վախնար թէ իր քոյրերը հսկաներու ձեռքը չիյնան: Իրիկուն մը երբ ուրախ զուարթ տուն կը դառնար, ճիչեր, ձայներ, ողբեր լսելով զարմացաւ մնաց: Քայլերը փութացուց. աւա՛ղ, տառապանքի ինչ տեսարան կ'սպասէր իրեն: Ծերուկ պարոնը, ազգականները, ծառաները, ամբողջ ընտանիքը յուսահատ անսր իմացուցին թէ անդրանիկ աղջիկը յափշտակեր էին: Մալօն առաջին անգամ միւսներուն պէս ինք ալ սրտաբեկեցաւ, բայց իր քրոջ հետքերը գտնելու հաստատ որոշումով առտուն կանուխ անտառն ուղղուեցաւ: Պարապ յոյս, փնտռեց, մացառու տներու տակն ու վրան աչքէ անցուց, առտուընէ մինչեւ իրիկուն փայտ կտրեց ու տուն վերադարձաւ չարաչար յոգնած, առանց փնտռած հետքերը գտած ըլլալու: Նոր դժբաղդութիւն մը իրեն կ'սպասէր, երկրորդ քոյրն անհետացած էր: Միւս օրն ալ երիտասարդը ուզեց երթալ իր չարասանջ գործին ետեւէն: Ողջագուրեց իր ծերուկ հայրն ու կրտսեր քոյրը:

— Սիբեի հայր, շատ լաւ հսկէ անոր վրայ, խորհիր թէ միայն նէ կը մնայ մեզ, վայրկեան մա իսկ մի' կորսնցներ աչքէդ:

— Մեկնէ', զաւակս, մի' վախնար. անիկա յափշտակելու համար ամէնէն առաջ իմ կեանքս խելու է:

Քէրօտէրնի ծեր պարոնը ճշմարիտն ըսած էր: Երբ Մալօն իրիկուն վերադարձաւ, իր երկու անդրանիկ քոյրերը գտնելու ապարդիւն ջանքերէն պարտասած ու վհատ, տեսաւ թէ երրորդ քոյրն ալ յափշտակուած ու հայրիկին անկենդան մարմինը սեմին վրայ դիտապաստ ինկած էր:

Երիտասարդին վիշտը անհուն եղաւ: Քանի մը օրեր սենեակին մէջ փակուած մնաց, մէկը տեսնել չէր ուզեր ու միշտ կուլար. ժամանակը թէև չէր ամոքեր իր վիշտը սակայն անոր դառնութիւնը կը մեղմէր: Երիտասարդ, աշխոյժ և յանտուգն էր. ելաւ իր այնքան դժբաղդութեան պատճառ եղող անտառը գնաց: Բայց որսորդութիւնը զոր այնչափ կը սիրէր, այլ եւս հրապոյր մը չունէր իրեն համար. որո՞ւ պիտի պատմէր ընելիք յաջող որսորդութիւնները. ծերուկ պարոնը գորչագոյն սալաքարին տակ մեծելներու ծանր քունովը կը ննջէր. երեք սիրասուն քոյրերը՝ որոնց վարդագոյն շուրթերը միայն գիտէին ժպտիլ երջանիկ որսորդին, Լստուած գիտէ ուր էին: Օր մը իր տխուր մտածումնե-

րուն մատնուած ծառուղիէ մը կը յառաջանար, անտառային բացավայրի մը մուտքին վրայ արեւի զուարթուկ ճառագայթի մը տակ նշմարեց էն աղուորիկ նապաստակը զոր երբէք տեսած ըլլար կեանքին մէջ, Անոր կակուղ ու նուրբ ստեւը արծաթի կը նմանէր, թուխ թաւազոյն խոշոր աչքերն ալ տարօրէն լոյսով մը կը փալփլային։ Ականջացից (oreilles dressées) նստած, մերթ թաթերով իր զունջը չփելուն կ'զբաղէր, մերթ խորամանկ ու գրեթէ թելադիր երեւոյթով մը Մալօին կը նայէր անքթիթ։ «Չեմ ուզեր այսքան սիրուն անասնիկ մը սպաննել, խորհեցաւ Մալօն։ Պիտի փորձեմ զայն բռնել քանի որ տեղէն չի շարժիր. թերեւս թաթին մէկը կուտած է, պիտի խնամեմ, պիտի բուժեմ ու պիտի ընտելացնեմ։ Պզտիկ բարեկամ մը պիտի ըլլայ որ միայնակեցուած թեանս տաղտուկը պիտի փարատէ»։ Ու մօտեցաւ շատ կամացուկ մը ձեռքը երկնցուցած նապաստակին որ կարծես անոր կ'սպասէր։ Բայց ա'յն վայրկենին որ պիտի բռնէր, կենդանին խոյս տուաւ. կեցաւ քիչ մ'աւելի հեռուն և վերսկսաւ Մալօն զիտել իբր թէ զայն քամահեր։ Ասիկա կրկին փորձեց բռնելու և չի յաջողեցաւ առաջին անգամուանին պէս։ Այս խաղը երկար տեւեց. կենդանին միշտ ինքզինք ձեռք տալու տրամադիր կ'երեւէր, բայց խոյս կուտար ա'յն վայրկենին ուր որսորդը վստահ էր թէ պիտի բռնէր։ Այնպէս որ իրկունը վրայ հասաւ և Մալօն վերադարձաւ խիստ սրտնեղ նապաստակը չի բռնելուն. ասոր հետ մէկտեղ անոր վրայ հրացան պարպելու համոզումը չի գոյացուց իր մէջ։ Հետեւեալ առտուն, անտառ վազեց ու անհամբերաբար բացավայրին ճամբան բռնեց, Արծաթավարս նապաստակը ճիշտ իրկուան թողած տեղն էր, միշտ հրապուրիչ, միշտ ծաղրող և միշտ աւելի յանկուցիչ քան երբէք։ Հետապնդումը վերսկսաւ... իրկուն եղաւ, Մալօն սաստիկ սրտնեղած ու չարաչար յոգնած էր։ «Ահ, ա'լ հերիք, աղաղակեց, ո՛րքան միամիտ մէկն եմ եղեր որ նապաստակի մը համար այնքան յոգնեցայ»։ Նշան առաւ ու կրակ ըրաւ. նապաստակը տեղէն իսկ չի շարժեցաւ։ Չի յաջողեցայ խորհեցաւ։ Երկրորդ անգամ կրակ ըրաւ. նապաստակը նորէն չի շարժեցաւ տեղէն։ Պէտք էր որ առաջին հարուածով զգետնած ըլլայի, ըսաւ ինքնին Մալօ, բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ տակաւին նստուկ կը մնայ։ Եւ յառաջացաւ բռնելու համար. բայց ա'յն վայրկենին որ վրան ձեռք պիտի դնէր, նապաստակը յիսուն քայլ հեռուն նետուեցաւ։ Մալօն իր անճարակութենէն սրտնեղած՝ կապարի կարկուտ մը տեղալ սկսաւ խեղճ անասնիկին վրայ, որ կատաղի որսորդին նայիլը խիստ հանդարտութեամբ կը շարունակէր։ Այն ատեն Մալօն նշմարեց թէ կապարահատերը նապաստակին արծա-

Թաթոյր մազերուն կը հպէին չէին հպէր տափակնալով գետին կ'իյնային առանց անոր չարիք մը հասցնելու : «Դիւթուած նապաստակ մըն ես, աղաղակեց, քեզ բռնել փորձելովս պարապ տեղը ժամավաճառ կ'ըլլամ» : Երբէք պիտի չի յաջողիմ : Այլ եւս տուն դառնալու եմ : այնքան հեռուները բերիւր զիս որ բնա՛ւ պիտի չհտանիմ հոն, շատ կը վախնամ թէ այսօր բացօթեայ գիշերեմ : Ո՛չ, եթէ ուզես, ըսաւ նապաստակը, մարդկային լեզուով : Ի՞նչ պէս կ'ըլլայ այս, հարցուց Մալօ ապշահար : Հնամենի կաղնիներու սա ծառուղին բռնելով գնա՛, անդիի ծայրը տուն մը պիտի գտնես, ուր պիտի կրնաս գիշերն հոն անցնել և անդրանիկ քոյրդ տեսնել : Երիտասարդը վայրկեան մը մտայոյզ մնաց : «Ո՛ւր արդեօք կրնայ ըլլալ քոյրս, խորհեցաւ, հաւանաբար հսկաներու քով : Ի՛նչ հոգս, կ'ուզեմ զայն տեսնել ու տուն տանիլ փորձել» : արծաթավարս նապաստակի խորհուրդին պիտի հետեւիմ» : Եւ հինաւուրց կաղնիներու ծառուղին ձեռք առաւ, որ յիշեալ տունը կ'առաջնորդէր : Վայրկեան մը կանգ առաւ, չորս բոլորքը զիտելու, յետոյ մեծ կամ պզտիկ որ և է մուտք չի տեսնելով՝ դուռը զարկաւ : Դուռն երկաթ էր ու Մալօյի սաստկաբախ հարուածներուն տակ ուժով ձայն կը հանէր : աղմուկն իր անդրանիկ քոյրը պատուհանը բերաւ : — «Ո՛վ է հարցուց նէ : Ես եմ, Մալօն, Դէրօտէրնի տէրը որ քեզ տեսնել կուգայ» : քոյր իմ, չուտով բաց : — Ա՛հ, սիրելի եղբայր, ո՛րքան երջանիկ եմ, կը կարծէի թէ երբէք պիտի չտեսնեմ քեզ» : Վար իջաւ աճապարանքով, դուռը բացաւ և եղբայր ու քոյր զիրար ողջագուրեցին գորովագին :

Թարգմ. ՄԵԼՔՈՆ Ս. ՂԵԻՈՆԴԵԱՆ

(Մնացեալն յաջորդով)

Հանրագիտակի 4.րդ հարցումին պատասխանէ է



Տպարանէս լոյս տեսաւ. 2. էֆ. Թորոսեանի յօրինած «Դպրոցի Գիրքը», ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ ՀԱՄԱՐ. — Ա. մաս. Այբենարան ու նախադասութիւնք և Բ. մաս Ընթերցումներ:

Գործը թէեւ փոքրիկ, բայց իրապէս մանկավարժական է. մաքուր տպագրութիւն, ընթերցողի քուլը եւ գեղեցիկ պատկերներ:

Ստորեւ դրուած ազդէին վրայ մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻՒՆՔ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ (2. ԹՈՐՈՍԵԱՆ)

Պոլիս, Չագմագներլար եօզուռու, քիւ 64

ԸՆԹԱՅԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Դպրոցի գիրք՝ Մանկապարտէզի ու նախակրթարաններու համար

Ա. ՄԱՍ. — Այբենարան ու պարզ նախադասութիւններ, ուր այբ-բենի ուսուցման դժուարութիւնն յարդուած է՝ մանկավարժական պարզ եւ հասկնալի հրահանգներով: Տպագրուած ընտիր թղթի վրայ ու զարդարուած տղաքը գրօսցնող նոր պատկերներով. էջ 32, գին 20 փր. 100ը 25 եւ 50ը 15 ղրշ:

Բ. ՄԱՍ. — Պարզ եւ դիւրահասկնալի ընթերցումներ՝ զարդարուած հետաքրքրական ու նոր պատկերներով: Ասոր ընդարձակ յառաջարանին մէջ Այբ-բենի ուսուցման ամենադիւրին եղանակը իր բոլոր մանրամասնութեամբ պարզուած է: Տպագր. ընտիր թղթի վրայ. էջ 63, Գին 2 ղրշ. 100ը 100 եւ 50ը 62½ ղրուշ:

Նոյն երկու մասը մէկտեղ կազմուած էջ 95. գին 100 փր. և 100ը 125 ղրշ:

ԴՊՐՈՑԻ ԳԻՐԲԸ, նախակրթարանի համար, հրատարակուած հն՝ (տարրական ընթացք)

Նախապատրաստական տարի պատկեր.	էջ 128	գին 3 ղրշ.
Առաջին	» » » 128	» 4 »
Երկրորդ	» » » 156	» 4 »

Իսկ չորրորդ մասը ընդարձակ ու շահեկան պարունակութեամբ արդէն մամլոյ տակ է: Մանկապարտէզի բաժինէն անխտիր ամէն դպրոցի մէջ մէկ օրինակ ձրի կը ղրկէ գրատունը՝ ի փոխարէն 30 փրջ. թղթատարական փուլի:

Յանձնարարութիւնները պէտք է ուղղակի յօրինողին հասցէին ղրկել, առանց միջնորդի, թէ՛ մեծագոյն զեղչը ստանալու և թէ՛ բուն յանձնարարութիւնը ստանալու:

Վ. Յ. Յակոբեան Անգ.-Հայ բառգիրքը կը գտնուի մի միայն տոյն գրատունը, գին փոստի ծախքով 85 ղրշ. ինչպէս նաեւ Եղիա Տէմիրճիպաշեանի Հայ-գաղ. բառգիրքը, որ իր վերջն ունի յատուկ անուանց բառգրքով մըն ալ. գին 15 ղրշ. Զեղչ գոհացուցիչ. Ամէն վճարում կանխիկ է եւ Պոլսոյ մէջ վճարելի:

Վերոյիշեալ գիրքերը նոյնութեամբ եւ նոյն զեղչով տպարանէս ալ կրնան ստանալ փոխարժէքը կանխիկ ղրկելով:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՈՆԱՏԻՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱՆԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը Ալի հատտէսի, Թիւ 38

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ :

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

50 ղրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

60 »

Հատը

40 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազպազեան
Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ա, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեփրեսալ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպօլի Դրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեօարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիրասոն Թովմաս էֆ. Գարագաշեան
Կիւրիւն, Դրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Կ. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Դրիգոր Վահ. Թաշճեան
Մաւրաւ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօզեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարալիավուրեան և Հնկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսաւր, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա հիսաւր. — Գազիկ էֆ. Օղանեան
Պալպուրդ, Մատիկոն էֆ. Վարժապետեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիւրքմէն, Լիւն էֆ. Սրապեան
Տիւրքմէն, Միհրան էֆ. Պաթաճեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

